

**5.19. Համերգային գործունեությունը 2005 թվականին**

2005թ. հանրապետությունում գործել են 33 մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգի 16 և համայնքային ենթակայության 4 համերգային կազմակերպություններ: Համերգային կազմակերպությունների քանակը 2004թ. համեմատ ավելացել է 1-ով:

2005թ. հանրապետությունում կազմակերպվել է 703 համերգ կամ 159-ով ավել, քան 2004թ.: Կոլեկտիվների ուժերով կազմակերպվել է 346, իսկ այլ կոլեկտիվների հետ համատեղ (պայմանագրային հիմունքներով)՝ 357 համերգ: Հանրապետությունում կայացած համերգներից 17-ը կամ 2.4%-ը կազմակերպվել են գյուղական համայնքներում, 305-ը կամ 43.4%-ը՝ ֆիլիարմոնիկ համերգներն են:

2005թ. արտասահմանում կազմակերպված 21 համերգ-հյուրախաղերից 16-ը իրականացվել է Եվրոպայում, 1-ը՝ Ռուսաստանի Դաշնությունում, 2-ը՝ Արաբական էմիրություններում և 2-ը՝ Սիրիայում:

2005թ. կազմակերպվել է 366 բարեգործական համերգ, հանդիսատեսների թվաքանակը կազմել է 77.9 հազ. մարդ: Պատվերներով կազմակերպվել է 32 համերգ, հանդիսատեսների թվաքանակը կազմել է 27.1 հազ. մարդ, ստացված հասույթը՝ 192.0 հազ. դրամ:

Համերգային դահլիճներում կազմակերպված համերգներին ներկա է եղել 227.0 հազ. հանդիսատես: Նրանց 3.2%-ը կամ 7.2 հազ. մարդ հաճախել են գյուղական համայնքներում կազմակերպված համերգներին, 55.2%-ը կամ 125.4 հազ. մարդ՝ ֆիլիարմոնիկ համերգներին: Հանրապետության 1000 բնակչի հաշվով հաճախումները կազմել են 71:

Համերգներից ստացված հասույթը կազմել է 49.3 մլն. դրամ, որից 17.9 մլն. դրամը ստացվել է ֆիլիարմոնիկ համերգներից, իսկ 0.4 մլն. դրամը՝ գյուղական համայնքներում կազմակերպված համերգներից: Միջին հաշվով մեկ համերգի մուտքի վճարումներից հասույթը կազմել է 70.1 հազ. դրամ, ընդ որում, գյուղական համայնքներում այդ ցուցանիշը կազմել է 23.5 հազ. դրամ:

**Համերգային կազմակերպությունների գործունեությունն ըստ մարզերի, 2005թ.**

	Համերգային կազմակերպությունների քանակը, միավոր	Համերգների քանակը, միավոր	Համերգների քանակը մեկ կազմակերպության հաշվով, միավոր	Հանդիսատեսների թվաքանակը, հազ. մարդ	Հանդիսատեսների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով, մարդ	Ստացված հասույթը, հազ. դրամ	Ստացված հասույթը մեկ ներկայացման հաշվով, հազ. դրամ
ք.Երևան	18	693	38	225.9	326	49176.5	71
Շիրակ	2	10	5	1.1	110	100.0	10.0
<b>Ընդամենը 33</b>	<b>20</b>	<b>703</b>	<b>35</b>	<b>227.0</b>	<b>323</b>	<b>49276.5</b>	<b>70.1</b>

2005թ. համերգային կազմակերպությունների ֆինանսական ընդհանուր մուտքերը կազմել են 570.1 մլն. դրամ, ֆինանսական ընդհանուր ծախսերը՝ 571.9 մլն. դրամ: Միջին հաշվով մեկ համերգի ֆինանսական ծախսերը 2005թ. կազմել են 813.5 հազ. դրամ:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ֆինանսական միջոցների մուտքն ու օգտագործումը, 2005թ.

(մլն. դրամ)

	Ընդամենը
<b>Ֆինանսական միջոցների մուտքեր</b>	<b>570.1</b>
այդ թվում՝	
ՀՀ բյուջեից (պետական, համայնքային)	370.1
բնակչությանը մատուցված վճարովի ծառայություններից	49.3
նվիրատվություններից	8.0
վարձակալությունից	27.5
այլ	115.2
<b>Ֆինանսական ծախսեր</b>	<b>571.9</b>
այդ թվում՝	
նյութական ծախսեր	43.0
ոչ նյութական ծառայությունների վճարումներ	45.1
գործուղման ծախսեր	9.5
աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	318.2
պարտադիր սոցիալական ապահովագրական վճարներ	74.6
հիմնավերանորոգման, սարքավորումների և գույքի ձեռքբերման ծախսեր	29.4
այլ	52.1